ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

# 2027-2029

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

## ԵՎ 2027

## ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեությունը դրսևորվում է երկու հիմնական ուղղություններով՝*

*1) բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով դիմում-բողոքների քննարկում, այսինքն՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդիրների ուսումնասիրություն անհատական մակարդակում.*

*2) մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգային խնդիրների վերհանում ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշում, ինչը նաև կանխարգելիչ նպատակ է հետապնդում՝ բացառելու ապագայում իրավունքների խախտման նմանատիպ դեպքերը:*

*Անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներն իրականացվում են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված երկու ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով:*

*Պաշտպանի աշխատակազմի գործունեության երկրորդ հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Հարկ է ընդգծել, որ անհատական դիմումներից բացի, համակարգային խնդիրների վերհանման աղբյուր են նաև Պաշտպանի կոնվենցիոն մանդատների շրջանակում մշտադիտարկման արդյունքները: Ոլորտային մշտադիտարկումների շնորհիվ պարբերաբար արձանագրվում են օրենսդրական կամ այլ ինստիտուցիոնալ մոտեցում ենթադրող համակարգային խնդիրներ:*

*Անհատական դիմումների քննարկման, մշտադիտարկումների և Պաշտպանին օրենքով վերապահված այլ գործառույթների իրականացման արդյունքներով վեր հանված խնդիրների հասցեագրումը հաճախ առաջ է բերում ինստիտուցիոնալ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտություն: Այդ առումով, Պաշտպանի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝*

*1. օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.*

*2. օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.*

*3. մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր կարծիքների տրամադրում.*

*4. Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի (Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշումների (amicus brief) ներկայացում.*

*5. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան դիմումների ներկայացում:*

*Այս հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում է Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու սահմանադրական գործառույթի շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլև ձեռնարկել անհատական դիմում-բողոքներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վեր հանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր:*

*Վերոգրյալից բացի, հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված են նաև կոնվենցիոն կարգավիճակներ: Այսպես.*

*1. Պաշտպանին է վերապահված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը,*

*2. Պաշտպանն իրականացնում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն,*

*3. Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:*

*Նշված կոնվենցիոն կարգավիճակներից բխող գործունեությունը ենթադրում է նաև մշտադիտարկումների իրականացում, որոնց արդյունքում արձանագրվում են նաև օրենսդրական կամ այլ ինստիտուցիոնալ մոտեցում ենթադրող համակարգային խնդիրներ:*

*Նշվածից զատ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում 2022 թվականին կատարված լրացումների արդյունքում Պաշտպանի կողմից քննարկվող հարցերի շրջանակն ընդլայնվել է՝ դրանում ներառելով կազմակերպությունների կողմից ազդարարների և նրանց հետ փոխկապակցված անձանց իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը:*

*Պաշտպանի աշխատակազմի գործունեության կարևոր ուղղություններից են նաև՝*

*1) Պաշտպանի տարեկան հաղորդման և Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցների, ինչպես նաև հրապարակային զեկույցների նախագծերի մշակումը.*

*2) անձանց իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ իրավաբանական խորհրդատվության տրամադրումը.*

*3) արագ արձագանքման շրջանակներում անհետաձգելի այցերի իրականացումը, այդ թվում՝ ազատությունից զրկման վայրեր, ներառյալ՝ ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրեր, քրեակատարողական հիմնարկներ, կայազորային կարգապահական մեկուսարաններ, հոգեբուժական կազմակերպություններ, ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցներ և այլն.*

*4) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված դեպքերում Պաշտպանի՝ դատարան ներկայացվող հայցերի նախապատրաստումը.*

*5) Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ինչպես նաև Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման փուլում Պաշտպանի ներգրավման գործընթացին մասնակցությունը:*

*Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով վերապահված, ինչպես նաև նախատեսվող նոր լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով 2027-2029 թվականներին նախատեսվում է Պաշտպանի աշխատակազմում կատարել կառուցվածքային փոփոխություններ:*

*2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված՝* ***Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակները,*** *որոնք ընդունվեցին աշխարհի երկրների առաջնորդների 2015թ. սեպտեմբերի ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Այդ նպատակները, ի թիվս այլնի, ներառում են ամուր առողջությունը և բարեկեցությունը (3-րդ նպատակ), բոլորի*

*համար ներառական ու համապատասխան որակյալ կրթությունը և ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունների խթանումը (4-րդ նպատակ), կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը (5-րդ նպատակ), ջրի ու սանիտարական պայմանների հասանելիությունը և դրանց կայուն ձևով կառավարումը (6-րդ նպատակ), կայացած, ներառական և կայուն տնտեսական աճի, լիարժեք և արտադրողական զբաղվածության և բոլորի համար արժանապատիվ աշխատանքի խթանումը (8-րդ նպատակ), Խաղաղություն, արդարություն և ամուր հաստատություններ (16-րդ նպատակ), Գործընկերություններ հանուն նպատակների (17-րդ նպատակ) և այլն:*

*Հաշվի առնելով, որ կայուն զարգացման նպատակներն ուղղված են մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորմանը հասարակական կյանքի փարբեր ոլորտներում՝ դրանք բովանդակային առումով ներառվում են նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության շրջանակներում՝ հիմք ընդունելով վերջինիս լայն մանդատը, ինչպես նաև կոնվենցիոն կարգավիճակները: Ավելին, Պաշտպանի՝ երկրում մարդու իրավունքների և ազատությունների վիճակը գնահատող տարեկան հաղորդումներն ու զեկույցները հանդես են գալիս իբրև կայուն զարգացման նպատակների իրագործման գնահատման օբյեկտիվ ցուցիչներ:*

## 2. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

| Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման) | Հիմնավորումներ |
|---|---|
| Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում | Նշված ծրագրերի միջոցով ապահովվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը |
| ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում | |

## 3. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

### 3.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

1) ***<u>Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ:</u>***

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվում են* ***<u>պարտադիր ծախսերին դասվող հետևյալ 2 միջոցառումները</u>՝***

1. ***Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում,***
2. ***ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:***

| Դասիչը | | Միջոցառման անվանումը | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը[1] | Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները | Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը |
|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | | | | |
| Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝ | | | | | |
| 1060 | 11001 | Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում | Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մշտադիտարկում, մարդու իրավունքներին վերաբերելի խնդիրների լուսաբանում և հանրային իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն: | Աշխատակազմի հաստիքների առավելագույն թիվը, Էներգետիկ. կոմունալ,կապի գծով ծախսեր, գործուղումների գծով ծախսեր | «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված |
| | 31001 | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում | ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում | | «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդված |

## 3.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ «Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և 2027-2029 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով և 2027 թվականի բյուջետային հայտով ներկայացվող ծախսային պարտավորություններն են* ***1060 «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի շրջանակում իրականացվող 11001 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում» և 31001 «ՀՀ***

***մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի  տեխնիկական հագեցվածության բարելավում» միջոցառումները***:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվող 1060 «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրի շրջանակում գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գծով ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկություններ չկան:*

## 3.3. ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 2027-2029 թվականների համար նոր նախաձեռնություններ չեն ներկայացվել:*

## 4. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:*

## 5. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ունի 5 մարզային ստորաբաժանումներ՝ Գյումրի, Գավառ, Կապան, Վանաձոր և Իջևան քաղաքներում:*

## 6. ՄԻՋՈԼՈՐՏԱՅԻՆ (ԽԱՉՎՈՂ) ԲՆՈՒՅԹԻ ԱՌԱՆՁԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

## 7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջե ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր/միջոցառումներ չեն ներկայացվել/նախատեսվել:*

## 8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը «Մարդու իրավունքների պաշտպանություն» ծրագրով 2027-2029 թվականների համար բյուջետային աղբյուրներից ներկայացրել է հայտ՝ համապատասխանաբար 677925,0 հազար, 686128.7 հազար և 691704,5 հազար դրամի չափով:*

## 9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

*2027-2029 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով ներկայացվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեության ապահովման հետ կապված ծախսերը, որոնք հաշվարկվել են նախորդ տարիներին կատարված փաստացի ծախսերին և շարունակական ծախսերի գծով հաստատված նորմատիվներին համապատասխան:*

| Ռիսկի նկարագրությունը | Երևույթի հանդես գալու հավանականությունը[2] | Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա | Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները |
|---|---|---|---|
| Գրավոր և բանավոր դիմում-բողոքների շարունակական աճ | 2 | Առկա ռեսուրսներով դրական լուծում ստացած գործերի տեսակարար կշռի նվազում | Աշխատակազմի կարողությունների հզորացում և համարժեք ռեսուրսների տրամադրում, ինչը թույլ կտա գործնականում իրականացնել քաղաքացիների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն՝ ապահովելով նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների դեպքում Պաշտպանի աջակցությունը ստանալու հնարավորությունը: |

[2] *Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն*

Հավելված N 12

# ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

***(հակիրճ շարադրանք)***

## 1. ՈԼՈՐՏԸ

Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

## 2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության թիրախային առաջնահերթություններն ու նպատակներն են, մասնավորապես, խոշտանգման, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեմ պայքարի, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, ընտանեկան բռնության դեմ պայքարի ու կանանց իրավունքների խթանման, խտրականության դեմ պայքարի, հավաքների ազատության և կարծիքի արտահայտման ազատության երաշխավորման ոլորտներում, քրեական արդարադատության համակարգում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված աշխատանքները, սոցիալ-տնտեսական, մշակութային իրավունքների, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների, ազդարարների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, մարդու իրավունքների խթանումը, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության համակարգի ամրապնդմանն ուղղված միջազգային համագործակցության զարգացումն այլ երկրների օմբուդսմանական հաստատությունների, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ու տարածաշրջանային կառույցների և այլ դերակատարների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության այս հիմնական թիրախների ապահովմանն են ուղղված Աշխատակազմի գործունեությունը՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

• անհատական բողոքների և դիմումների քննարկում, մշտադիտարկման այցեր, դրանց արդյունքներով անհատական ու համակարգային խնդիրների վերհանում,

• մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավասու մարմին կարծիքների ներկայացում,

• մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված օրենսդրական նախագծերի մշակում,

• օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումների հասցեագրում,

• Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում,

• մարդու իրավունքների խթանման, կրթության ու իրազեկման ուղղությամբ շարունակական միջոցառումների անցկացում,

• ազդարարների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը միտված աշխատանքների իրականացում,

• մարդու իրավունքների մանդատ ունեցող միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների հետ աշխատանք՝ միտված Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի ներկայացմանն ու բարելավմանը:

## 3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*ՄԺԾԾ ժամանակահատվածում հիմնական ծախսային գերակայություններն են.*

*1. ՀՀ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում:*

*2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում:*

*Նշված ծրագրերի միջոցով ապահովվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բնականոն գործունեությունը:*

*Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուցիոնալ անկախության, աշխատակազմի կարողությունների ամրապնդման, ֆինանսավորման շարունակական բարելավման անհրաժեշտությունը, բազմիցս ընդգծվել է Պաշտպանի կողմից նաև տարեկան հաղորդումների շրջանակում: Օրինակ, 2024թ. տարեկան հաղորդմամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի պատշաճ և բավարար մակարդակի ապահովման կարևորությունն ընդգծվել է՝ հաշվի առնելով նաև վերջին տարիներին քննիչների, դատախազների ամսական վարձատրության բարձրացման միտումը ու այդ համատեքստում Պաշտպանի աշխատակազմի աշխատավարձերի անփոփոխ մնալը: Հաշվի առնելով Պաշտպանի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանության համակարգի բազմաշերտությունն ու բազմակողմանիությունը՝ պետության՝ մարդու իրավունքների պաշտպանության հարցերի կարևորման վերաբերմունքի դրսևորման տեսանկյունից՝ կարևոր է նշված համակարգերում և Պաշտպանի աշխատակազմում աշխատավարձերի չափի մեծ խզվածքի վերացմանն ուղղված կառուցակարգերի մշակումը:*

*Հատուկ պետք է ընդգծել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուցիոնալ անկախության, ֆինանսավորման բարելավման և աշխատակազմի կարողությունների ամրապնդման անհրաժեշտությունը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների և Հայաստանին հասցեագրված համապատասխան միջազգային ու տարածաշրջանային մարմինների հանձնարարականներով:*
*Միջազգային առանցքային դերակատարների (ՄԱԿ կոմիտեներ, ԵԽ կառույցներ, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, ԵԱՀԿ, Վենետիկի հանձնաժողով, ENNHRI, GANHRI և այլն)*[1] *հանձնարարականների իրացման*

[1] Տես, օրինակ, պետությանն ուղղված հետևյալ միջազգային հանձնարարականները.
https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT%2FC%2FARM%2FCO%2F5&Lang=en

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2FC%2FARM%2FCO%2F7&Lang=en

https://ganhri.org/wp-content/uploads/2024/11/SCA-Report-2nd-Session-2024_EN.pdf

https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2024/03/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fe71d6cc/fb158bf9-en.pdf

*կարևորությունը Հայաստանի Հանրապետության համար էլ ավելի է ընդգծվում նաև այն առումով, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի անկախ և արդյունավետորեն գործող ինստիտուտի առկայությունը միջազգային մակարդակում դիտարկվում է որպես պետության կողմից մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության նկատմամբ հարգանքի իրական հանձնառության կարևոր ցուցիչ:*

*ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվում են պարտադիր ծախսային ծրագրեր:*

## 4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

*Ստորև ներկայացվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ 2027-2029 թթ. Յուրաքանչյուր տարվա համար նախատեսված չափաքանակները.*

*2027 թվականի համար՝ 677925,0 հազ. դրամ*

*2028 թվականի համար՝ 686128,7 հազ. դրամ*

*2029 թվականի համար՝ 691704,5 հազ. դրամ*

---

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CED%2FC%2FARM%2FCO%2F1&Lang=en

https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT%2FC%2FARM%2FCO%2F5&Lang=en

https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2021)035-e

https://www.sigmaweb.org/content/dam/sigma/en/publications/reports/2025/12/public-administration-in-armenia-2025_5c12af02/f996600c-en.pdf

https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=i7FkMterQtCIz0Va3a%2FU3U%2F7MiSEItgqwk6DUtsjk7kldbSzfSQoEY%2FZe2WhzISQjxL4AD7A64cJPVsu8jGJJQ%3D%3D

## ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պետական մարմնի անվանումը` *Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ*

*Հազար դրամ*

| ԲԳԿ | Ծրագրի/միջոցառման դասիչը | | ԲԳԿ/Ծրագրի /միջոցառման անվանումը | Ծրագրի նպատակը/Միջոցառման նկարագրությունը | Միջոցառման տեսակը[1] | Բյուջետային ծախսերը (հազ. դրամ) | | | Միջոցառման գծով բազային բյուջեն | | | Միջոցառման գծով առաջարկը ներառյալ բազային բյուջեի ընդլայնումները[4], նոր նախաձեռնությունները | | | Ծախսային խնայողության գծով առաջարկը (-)[5] | | | Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը[6] | Հիմնավորումներ/ Պատճառներ (այդ թվում՝ 2026 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 2027թ. բազային բյուջեի տարբերության պատճառները ըստ հիմնական գործոնների* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծրագիր | Միջոցառում | | | | 2025թ. (փաստացի) | 2026թ. (հաստատված)[2] | 2026թ. (բազային)[3] | 2027թ. | 2028թ. | 2029թ. | 2027թ | 2028թ. | 2029թ. | 2027թ | 2028թ. | 2029թ. | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 |
| *ԸՆԴԱՄԵՆԸ[7]* | | | *Մարդու իրավունքների պաշտպանություն* | *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն* | *Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր 'A' միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)* | *585301.50* | *602336.00* | *602336.00* | *622167.44* | *629112.55* | *634286.99* | *677925.00* | *686128.70* | *691704.50* | *0.00* | *0.00* | *0.00* | | |
| *105035* | *1060* | *11001* | *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում* | *Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշման ընդունում, մոնիտորինգ, բողոքների լուսաբանում և հասարակական իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն:* | *Ծառայությունների մատուցում* | *580135.5* | *602336.0* | *602336.0* | *612002.4* | *618947.5* | *624122.0* | *667760.0* | *675963.7* | *681539.5* | | | | *պարտադիր* | *պայմանավորված է «ազդարարների պաշտպանության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժին» ստեղծելու կանխատեսմամբ* |
| | | *31001* | *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում* | *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատանքային պայմանների բարելավման համար վարչական սարքավորումների ձեռքբերում* | *Պետական մարմինների կողմից օգտագործվող ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ* | *5166.00* | *0.00* | *0.00* | *10165.0* | *10165.0* | *10165.0* | *10165.0* | *10165.0* | *10165.0* | | | | *պարտադիր* | *Հաշվի առնելով առկա գույքի և տեխնիկայի գերակշռող մասի 100% մաշվածությունը՝ նախատեսվում է ձեռք բերել նորը:* |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | |

*Սույն հավելվածը ներկայացվում է ՄԺԾԾ փուլում, թարմացվում Բյուջետային հայտի փուլում*

**Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ**

## ՄԱՍ 2 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

| Նպատակը[1] | Ծրագրի դասիչը[2] | Ծրագրի անվանումը[3] | Ծրագրի վերջնական արդյունքները | | | | | Կապը ՀՀ կառավարության ծրագրով և ՀՀ գործող այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված ՀՀ կառավարության քաղաքականության նպատակների և թիրախների հետ[9] | Կապը ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և ցուցանիշների հետ[10] | Փոփոխությունը 2026-28թթ. ՄԺԾԾ փաստաթղթի համեմատ (լրացնել այո կամ ոչ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Չափորոշիչը[4] | Ելակետը | | Թիրախը | | | | |
| | | | | Ցուցանիշը[5] | Ժամկետը[6] | Ցուցանիշը[7] | Ժամկետը[8] | | | |
| *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն* | *1060* | *Մարդու իրավունքների պաշտպանություն* | *Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհված ամենաբարձր<A> միջազգային հեղինակավոր կարգավիճակի պահպանում (վերահաստատում)* | *Միջազգային <A>* | *2029 թվական* | *Միջազգային <A>* | *2029թ. (Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից շնորհվող կարգավիճակը վերանայվում է 5 տարին մեկանգամ: Գնահատման համար ուսումնասիրությունը ներառում է նախորդ 5 տարիների գործունեությունը):* | *5. ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ, 5.2ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ* | | ***ոչ*** |
| | | | | | | | | | | |

*Սույն հավելվածը ներկայացվում է ՄԺԾԾ փուլում, թարմացվում Բյուջետային հայտի փուլում*

**Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ***

## ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ[21]

| Ծրագրի դասիչը | Ծրագրի անվանումը |
|---|---|
| 1060 | Մարդու իրավունքների պաշտպանություն |

**Ծրագրի միջոցառումները**[1]

Հազար դրամ

| Ծրագրի դասիչը՝ | *1060* | Ցուցանիշներ | | |
|---|---|---|---|---|
| Միջոցառման դասիչը՝ | *11001* | 2025թ. (փաստացի) | 2026թ. (պլան) | 2027թ. |
| Միջոցառման անվանումը՝ | *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների տրամադրում* | | | |
| Նկարագրությունը՝ | *Մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշման ընդունում, մոնիտորինգ, բողոքների լուսաբանում և հասարակական իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլն:* | | | |
| Միջոցառման տեսակը [2] | *Ծառայությունների մատուցում* | | | |
| Միջոցառումն իրականացնող | *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ* | | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | | |
| Արդյունքի չափորոշիչի տեսակը[4] | Արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը | | | |
| *Քանակական* | *Գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակն՝ ըստ իրավական ծառ. ստացած անձանց* | *12403* | *12797* | *13023* |
| *Քանակական* | *Թեժ գիծ հեռախոսահամարին ստացված զանգեր, քանակ* | 4249 | 5315 | 4674 |
| *Քանակական* | *Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակը՝ ըստ  իրավական ծառայություն ստացած անձանց* | 141 | 102 | 155 |
| *Քանակական* | *Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակն՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց* | 1211 | 1392 | 1332 |
| *Քանակական* | *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քանակն՝ ըստ  իրավական ծառայություն ստացած անձանց* | 654 | 477 | 719 |
| *Որակական* | *Դրական լուծում ստացած դիմում-բողոքների քանակն՝ ըստ իրավական ծառայություն ստացած անձանց* | *1688* | *1408* | *1772* |
| *Որակական* | *Ուսումնասիրված դիմում-բողոքների մեջ դրական լուծում ստացած դիմում-բողոքների տեսակարար կշիռը, տոկոս* | *13.6* | *11* | *13.6* |
| *Քանակական* | *Պաշտպանի տարեկան հաղորդման և արտահերթ զեկույցների, ներառյալ Կանխարգելման ազգային մեխանիզմի, Կոնվենցիոն մանդատների ապահովման շրջանակներում զեկույցների, ուսումնասիրությունների և իրավական չափանիշների հրապարակում, հատ* | 6 | 8 | 8 |
| *Քանակական* | *Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում այցեր ազատությունից զրկման վայրեր, հատ* | 59 | 55 | 64 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Քանակական | Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթի շրջանակներում քննարկումների, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարցերով վերապատրաստման միջոցառումների կազմակերպում, իրականացում, այդ թվում միջազգային միջոցառումներ, փորձի փոխանակում, հատ | 92 | x | x |
| Քանակական | Կանխարգելման ազգային մեխանիզմի ուսումնասիրությունների արդյունքներով առաջարկություններ, քանակ | x | 300 | 300 |
| Քանակական | Կանխարգելման ազգային մեխանիզմի ուսումնասիրությունների արդյունքներով լուծված առաջարկություններ քանակ, տոկոս | x | 30 | 30 |
| Քանակական | Արագ արձագանքման և բողոքների քննարկման շրջանակներում այցեր, այդ թվում փաստահավաք աշխատանքներ, հատ | 333 | 178 | 366 |
| Քանակական | Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարցերով իրազեկման աշխատանքների կատարման ուղղությամբ միջոցառումների (այդ թվում երկխոսությունների և հարցազրույցների) հանրայնացում և տարածում, քանակ | 2441 | 1500 | 2685 |
| Քանակական | Մշտադիտարկման այցեր երեխայի խնամքի և պաշտպանության կազմակերպություններ, ուս հաստատություններ, հաշմանդամություն ունեցող անձանց խնամք և աջակցություն տրամադրող հաստատություններ, պետության կողմից պատվիրակված ծառայություններ մատուցող կազմակերպություններ, հատ | 50 | 18 | 18 |
| Քանակական | Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների, գործունեության արդյունքներով օրենսդրական բնույթի առաջարկների ներկայացում, Սահմանադրական դատարան դիմումների և հատուկ կարծիքների ներկայացում, քանակ | 211 | 248 | 232 |
| Քանակական | Պաշտպանին առընթեր հասարակական խորհուրդների նիստեր և աշխատանքային քննարկումներ, հատ | 253 | 224 | 278 |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը | | *677925.0* | *686128.7* | *691704.5* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծրագրի դասիչը՝ | | Ցուցանիշներ | | |
| Միջոցառման դասիչը՝ | | 2025թ. (փաստացի) | 2026թ. (պլան) | 2027թ. |
| Միջոցառման անվանումը՝ | | | | |
| Նկարագրությունը՝ | | | | |
| Միջոցառման տեսակը | | | | |
| Միջոցառումն իրականացնողի անվանումը | | | | |
| Արդյունքի չափորոշիչներ | | | | |
| Արդյունքի չափորոշիչի տեսակը | Արդյունքի չափորոշիչի անվանումը և չափման միավորը | | | |
| | | | | |
| | | | | |
| Միջոցառման վրա կատարվող ծախսը | | | | |

Ձև N 2

Կառավարման ապարատ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

| | |
|---|---|
| Բաժին | |
| խումբ | |
| դաս | |

(հազար դրամ)

| Ծրագրային դասիչը | | | | Բյուջետային ծախսերը (հազ. դրամ) | | | 2027թ. | | | | | 2028թ. | | 2029թ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծրագիր | միջոցառում | կոդը | բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածի անվանումը | **2025թ. (փաստացի)** | 2026թ. (հաստատված) | 2026թ. (բազային) | Միջոցառման գծով բազային բյուջեն | Միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) | 2027թ. առաջարկի (հայտի) տարբերությունը 2026թ. հաստատվածի նկատմամբ | 2027թ. առաջարկի (հայտի) տարբերությունը 2025թ. փաստացի կատարողականի նկատմամբ | Հիմնավորումներ 2026թ. հաստատված բյուջեի նկատմամբ 2027թ. առաջարկի (հայտի) տարբերության վերաբերյալ | Միջոցառման գծով բազային բյուջեն | Միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) | Միջոցառման գծով բազային բյուջեն | Միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| | | | **Հաստիքային միավորների թիվը** | 98.0 | 98.0 | 98.0 | | | (98) | (98) | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | **Ծառայողական ավտոմեքենաների քանակը** | 7.0 | 7.0 | 7.0 | | | (7) | (7) | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | |
| | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | 585,301.5 | 602,336.0 | 602,336.0 | 622,167.4 | 677,925.0 | 75,589.0 | 92,623.4 | | 629,112.5 | 686,128.7 | 634,287.0 | 691,704.5 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | **ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ** | 580,135.5 | 602,336.0 | 602,336.0 | 612,002.4 | 667,760.0 | 65,424.0 | 87,624.5 | | 618,947.5 | 675,963.7 | 624,122.0 | 681,539.5 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ** | 512,738.8 | 500,365.9 | 500,365.9 | 504,175.8 | 559,933.3 | 59,567.4 | 47,194.5 | | 513,102.6 | 570,118.7 | 518,277.0 | 575,694.5 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | 4111 | **-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ** | 425,747.6 | 433,798.5 | 433,798.5 | 437,426.6 | 490,903.3 | 57,104.8 | 65,155.7 | Փոփոխությունները պայմանավորված են <Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, ինչպես նաև «ազդարարների պաշտպանության ոլորտում իրավունքների պաշտպանության բաժին» ստեղծելու կանխատեսմամբ: | 445,150.7 | 499,809.8 | 449,628.8 | 504,689.3 |
| | | 4112 | **- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ** | 61,148.5 | 39,869.9 | 39,869.9 | 39,863.5 | 40,718.8 | 848.9 | (20,429.6) | | 40,589.3 | 41,520.7 | 40,533.2 | 41,417.1 |
| | | 4113 | **-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում** | 25,842.8 | 26,697.5 | 26,697.5 | 26,885.7 | 28,311.2 | 1,613.7 | 2,468.4 | | 27,362.6 | 28,788.2 | 28,115.0 | 29,588.1 |
| | | 4212 | **Էներգետիկ ծառայություններ** | 5,703.6 | 9,221.6 | 9,221.6 | 9,424.3 | 9,424.3 | 202.7 | 3,720.7 | | 9,424.3 | 9,424.3 | 9,424.3 | 9,424.3 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «ՀՀ պետական բյուջեի նախագծում ՀՀ պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների՝ ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ծեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» №629-Ն որոշման համաձայն: | | | | |
| | | | Էներգետիկ ծառայություններ | 3,660.7 | 6,166.9 | 6,166.9 | 6,166.9 | 6,166.9 | 0.0 | 2,506.2 | | 6,166.9 | 6,166.9 | 6,166.9 | 6,166.9 |
| | | | Էլեկտրամոբիլների լիցքավորում | 10.2 | 287.1 | 287.1 | 287.1 | 287.1 | - | 276.9 | | 287.1 | 287.1 | 287.1 | 287.1 |
| | | | Էլեկտրաէներգիայով ջեռուցման ծառայություններ | 267.0 | 227.6 | 227.6 | 510.5 | 510.5 | 282.9 | 243.6 | | 510.5 | 510.5 | 510.5 | 510.5 |
| | | | Գազով ջեռուցման ծառայություններ | 1,765.8 | 2,540.0 | 2,540.0 | 2,459.8 | 2,459.8 | (80.2) | 694.0 | | 2,459.8 | 2,459.8 | 2,459.8 | 2,459.8 |
| | | 4213 | **Կոմունալ ծառայություններ** | 186.1 | 253.4 | 253.4 | 253.4 | 253.4 | - | 67.3 | | 253.4 | 253.4 | 253.4 | 253.4 |
| | | | այդ թվում՝ | | 253.4 | 253.4 | | | | | | | | | |
| | | | Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ | 126.1 | 163.4 | 163.4 | 163.4 | 163.4 | - | 37.3 | | 163.4 | 163.4 | 163.4 | 163.4 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շենքերի պահպանման ծառայություններ (դեռատիզացիա) | 60.0 | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 | - | 30.0 | | 90.0 | 90.0 | 90.0 | 90.0 |
| 4214 | **Կապի ծառայություններ** | 5,726.1 | 6,836.3 | 6,836.3 | 8,106.6 | 8,106.6 | 1,270.3 | 2,380.5 | Հաշվարկները կատարվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու ներքին կանոնները հաստատելու մասին» №1956-Ն որոշման համաձայն | 8,106.6 | 8,106.6 | 8,106.6 | 8,106.6 |
| 4215 | **Ապահովագրական ծախսեր** | 213.7 | 331.0 | 331.0 | 331.0 | 331.0 | - | 117.3 | | 331.0 | 331.0 | 331.0 | 331.0 |
| 4216 | **Գույքի և սարքավորումների վարձակալություն** | 8,852.9 | 8,952.0 | 8,952.0 | 8,952.0 | 8,952.0 | - | 99.1 | | 8,952.0 | 8,952.0 | 8,952.0 | 8,952.0 |
| 4217 | **Արտագերատեսչական ծախսեր** (այդ թվում՝ պահնորդական ծառայությունների գծով) | | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 | - | 15,000.0 | | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 |
| | **Ծառայողական գործուղումների գծով ծախսեր** | 11,697.7 | 18,500.0 | 18,500.0 | 20,000.0 | 20,000.0 | 1,500.0 | 8,302.3 | | 20,000.0 | 20,000.0 | 20,000.0 | 20,000.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| 4221 | Ներքին գործուղումներ | 2,650.6 | 5,000.0 | 5,000.0 | 5,000.0 | 5,000.0 | - | 2,349.4 | | 5,000.0 | 5,000.0 | 5,000.0 | 5,000.0 |
| 4222 | Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 9,047.1 | 13,500.0 | 13,500.0 | 15,000.0 | 15,000.0 | 1,500.0 | 5,952.9 | | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 | 15,000.0 |
| 4231 | **Վարչական ծառայություններ** | 1,817.6 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | - | 182.4 | | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 | 2,000.0 |
| 4232 | **Համակարգչային ծառայություններ** | 4,779.5 | 5,640.4 | 5,640.4 | 5,662.0 | 5,662.0 | 21.6 | 882.5 | | 5,662.0 | 5,662.0 | 5,662.0 | 5,662.0 |
| 4233 | **Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ** | 260.0 | 610.0 | 610.0 | 610.0 | 610.0 | - | 350.0 | | 610.0 | 610.0 | 610.0 | 610.0 |
| 4234 | **Տեղեկատվական ծառայություններ** | 1,171.8 | 3,012.0 | 3,012.0 | 3,012.0 | 3,012.0 | - | 1,840.2 | | 3,012.0 | 3,012.0 | 3,012.0 | 3,012.0 |
| 4237 | **Ներկայացուցչական ծախսեր** | 4,106.0 | 4,500.0 | 4,500.0 | 4,500.0 | 4,500.0 | - | 394.1 | | 4,500.0 | 4,500.0 | 4,500.0 | 4,500.0 |
| 4239 | **Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ** | 548.6 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | - | 770.4 | | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 548.6 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | - | 770.4 | | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 | 1,319.0 |
| 4241 | **Մասնագիտական ծառայություններ** | | | | | | - | - | | | | | |
| 4251 | **Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում** | 977.7 | 1,018.3 | 1,018.3 | 3,000.0 | 3,000.0 | 1,981.7 | 2,022.3 | ՄԻՊ վարչական շենքի և Իջևանի մասնաճյուղի ներքին պատերի և միջնորմների ամրացում, սվաղում, | 1,018.3 | 1,018.3 | 1,018.3 | 1,018.3 |
| 4252 | **Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում** | 3,742.3 | 4,354.8 | 4,354.8 | 4,350.0 | 4,350.0 | (4.8) | 607.7 | | 4,350.0 | 4,350.0 | 4,350.0 | 4,350.0 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | Ավտոմեքենաների ընթացիկ նորոգում և պահպանում | 3,235.0 | 3,154.8 | 3,154.8 | 3,250.0 | 3,250.0 | 95.2 | 15.0 | | 3,250.0 | 3,250.0 | 3,250.0 | 3,250.0 |
| | Սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 507.2 | 1,200.0 | 1,200.0 | 1,100.0 | 1,100.0 | (100.0) | 592.8 | | 1,100.0 | 1,100.0 | 1,100.0 | 1,100.0 |
| 4261 | **Գրասենյակային նյութեր և հագուստ** | 1,926.8 | 3,357.9 | 3,357.9 | 3,342.9 | 3,342.9 | (15.0) | 1,416.1 | | 3,342.9 | 3,342.9 | 3,342.9 | 3,342.9 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | Գրասենյակային պիտույքներ | 1,926.8 | 3,357.9 | 3,357.9 | 3,342.9 | 3,342.9 | (15.0) | 1,416.1 | | 3,342.9 | 3,342.9 | 3,342.9 | 3,342.9 |
| | Հագուստ և համազգեստ | | | | | | - | - | | | | | |
| 4262 | **Գյուղատնտեսական ապրանքներ** | | | | | | - | - | | | | | |
| 4264 | **Տրանսպորտային նյութեր** | 6,036.5 | 5,743.4 | 5,743.4 | 6,819.0 | 6,819.0 | 1,075.6 | 782.5 | | 6,819.0 | 6,819.0 | 6,819.0 | 6,819.0 |
| 4266 | **Առողջապահական և լաբորատոր նյութեր** | | | | | | - | - | | | | | |
| 4267 | **Կենցաղային և հանրային սննդի նյութեր** | 2,517.5 | 2,919.6 | 2,919.6 | 2,942.6 | 2,942.6 | 23.0 | 425.1 | | 2,942.6 | 2,942.6 | 2,942.6 | 2,942.6 |
| 4269 | **Հատուկ նպատակային այլ նյութեր** | 558.7 | 1,342.0 | 1,342.0 | 1,335.0 | 1,335.0 | (7.0) | 776.3 | | 1,335.0 | 1,335.0 | 1,335.0 | 1,335.0 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 4621 | **Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին** | 6,030.4 | 6,280.3 | 6,280.3 | 6,342.2 | 6,342.2 | 61.9 | 311.8 | | 6,342.2 | 6,342.2 | 6,342.2 | 6,342.2 |
| | | 4822 | **Այլ հարկեր** | | | | | | - | - | | | | | |
| | | 4823 | **Պարտադիր վճարներ** | 543.3 | 524.7 | 524.7 | 524.7 | 524.7 | - | (18.7) | | 524.7 | 524.7 | 524.7 | 524.7 |
| | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | ավտոմեքենաների տեխզննություն և բնապահպանական վճար | 42.5 | 86.4 | 86.4 | 86.4 | 86.4 | - | 43.9 | | 86.4 | 86.4 | 86.4 | 86.4 |
| | | | աղբահանություն | 500.8 | 238.3 | 238.3 | 238.3 | 238.3 | - | (262.5) | | 238.3 | 238.3 | 238.3 | 238.3 |
| | | | այլ | | 200.0 | 200.0 | 200.0 | 200.0 | - | 200.0 | | 200.0 | 200.0 | 200.0 | 200.0 |
| | | 4824 | **Պետական հատվածի տարբեր մակարդակների կողմից միմյանց** | | | | | | - | - | | | | | |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրային դասիչը | | | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | 5,166.0 | - | - | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 | 4,999.0 | | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 |
| Ծրագիր | Միջոց | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | 5122 | **Վարչական սարքավորումներ** | 5,166.0 | | | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 | 4,999.0 | Հաշվի առնելով առկա գույքի և տեխնիկայի գերակշռող մասի 100% մաշվածությունը՝ նախատեսվում է ձեռք բերել նորը: | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 | 10,165.0 |
| | | 5129 | **Այլ մեքենաներ և սարքավորումներ** | | | | | | - | - | | | | | |

Ձև N 1

Կառավարման ապարատ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Հայտատուի անվանումը

(հազար դրամ)

| բաժին | խումբ | դաս | Ծրագրային դասիչը | | բյուջետային հատկացումների ծրագրերի և միջոցառումների անվանումները | 2025թ. փաստացի կատարողական | 2026թ. հաստատված բյուջե | 2027թ. միջոցառման գծով բազային բյուջեն | 2027թ. միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) | 2028թ. միջոցառման գծով բազային բյուջեն | 2028թ. միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) | 2029թ. միջոցառման գծով բազային բյուջեն | 2029թ. միջոցառման գծով առաջարկը ներառյալ ընդլայնումները (հայտ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ծրագիր | միջոցառում | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | |
| | | | | | այդ թվում՝ | | | | | | | | |
| | | | | | *(լրացնել ծրագրի անվանումը)* | | | | | | | | |
| | | | | | **Ծրագրի վրա կատարվող ծախսը** | 585,301.5 | 602,336.0 | | 677,925.0 | | 686,128.7 | | 691,704.5 |
| | | | | | **այդ թվում՝** | | | | | | | | |
| | | | | *1100..* | *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների փրամադրում* | | | | | | | | |
| | | | | | **Միջոցառման վրա կատարվող ծախսը - ընթացիկ ծախսեր** | 580,135.5 | 602,336.0 | | 667,760.0 | | 675,963.7 | | 681,539.5 |
| | | | | *3100..* | *ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում* | | | | | | | | |
| | | | | | **Միջոցառման վրա կատարվող ծախսը - ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր** | 5,166.0 | - | | 10,165.0 | | 10,165.0 | | 10,165.0 |
| | | | | *3100..* | *(միջոցառման անվանումը)* | | | | | | | | |
| | | | | | **Միջոցառման վրա կատարվող ծախսը - ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր** | | | | | | | | |